ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԷԼԵՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ. ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ

Թափանցիկ, մատչելի և հաշվետու գնումներ/TAAP 2022

«Պետական գնումների էլեկտրոնային հարթակների մոնիթորինգ. լրագրողական հայացք» պրակտիկ զեկույցը մշակվել է «Թափանցիկ, մատչելի և հաշվետու գնումներ» (TAAP) ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերության (ՀԿ Կենտրոն) առաջնորդությամբ և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) ու «Համայնքը և երիտասարդները» երիտասարդական և խորհրդատվական հասարակական կազմակերպությունների հետ գործընկերությամբ կազմված կոնսորցիումի միջոցով:

«Թափանցիկ, մատչելի և հաշվետու գնումներ» ծրագիրն իրականացվում է «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակում տրամադրված ենթադրամաշնորհի միջոցներով: ԴԱՏԱ ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և ԴԱՏԱ գործընկերների կողմից, Ամերիկայի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

Զեկույցում արտահայտված տեսակետները և նյութերի բովանդակությունը միմիայն ՀԿ Կենտրոնինն ու TAAP կոնսորցիումի անդամ կազմակերպություններինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Պետական գնումներն առանձնակի խոցելի են կոռուպցիայի զանազան ձևերի առջև, քանի որ դրանք պետական ծախսերի զգալի մասն են կազմում, ինչը մեծ դաշտ ու հնարավորություն է ստեղծում տարատեսակ չարաշահումների համար։

Պետական գնումների մշտադիտարկման, դրանցում կոռուպցիոն ռիսկերի, շահերի բախման, անարդյունավետ ծախսերի բացահայտման գործում մեծ դեր ունեն լրագրողներն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները։ Պետական մարմիններն ու կառավարության ներկայացուցիչները թեև մշտապես հայտարարում են, որ քայլեր են ձեռնարկվում պետական գնումներն առավել թափանցիկ և հաշվետվողական, դրա հետ կապված տեղեկատվությունն առավել հասանելի, մատչելի դարձնելու ուղղությամբ, սակայն համակարգերը, որտեղ տեղադրվում են պետական գնումների հետ կապված փաստաթղթերը, ունեն մի շարք թերություններ և տեխնիկական խնդիրներ, որոնք խոչընդոտում են պետական գնումների ամբողջական և բազմակողմանի հետազոտության և/կամ մշտադիտարկման գործընթացը։

Միաժամանակ հարկ է նշել, որ ընդհանուր համակարգային խնդիրների հիմքում հաճախ կոնկրետ, տեղային տեխնիկական թերություններ/բացթողումներ են, որոնց լուծումը կարող է էապես հեշտացնել ոլորտային մշտադիտարկումները, տվյալների հետ աշխատանքը դարձնել արագ և արդյունավետ։

Պետական գնումների համակարգին առնչվող հիմնական տվյալներն ու փաստաթղթերը հասանելի են gnumner.am և armeps.am կայքերում։ Այս պրակտիկ էլեկտրոնային հարթակները նաև կարևոր գործիքներ են լրագրողների համար, ովքեր սակայն այստեղ առկա տվյալների հետ աշխատանքի շրջանակում նաև ունեն առանձնահատուկ կարիքներ։ Այս առումով խիստ կարևոր է, որ լրագրողների մասնագիտական գործունեությանը խանգարող տեխնիկական և բովանդակային խնդիրների քարտեզագրումն ու դրանց լուծման տարբերակների մշակման գործընթացին մասնակցեն նաև այն լրագրողները, ովքեր ամենօրյա ռեժիմով օգտվում են այդ հարթակներից և անմիջապես զգում են փոփոխությունների ազդեցությունն իրենց գործունեության վրա։

Հաշվի առնելով այս ամենը՝ «Թափանցիկ, մատչելի և հաշվետու գնումներ» (TAAP) ծրագրի համընկերությունը առաջարկել է գնումների ոլորտը լուսաբանող երկու գործընկեր լրագրողների առանձնացնել gnumner.am և armeps.am կայքերում առկա խնդիրները, որ խոչընդոտում են լրագրողական գործունեությանը, և առաջարկել այդ խնդիրների իրենց լուծման տարբերակները։

CivilNet-ի փաստերի ստուգման թիմի ղեկավար Անի Գրիգորյանը և **«Հետք» առցանց պարբերականի լրագրող Տրդատ Մուշեղյան**ը լրագրողական դիտարկետից ներկայացնում են կայքերում արձանագրած խնդիրները, համառոտ պատկերացում տալիս դրանցով պայմանավորված բովանդակային ռիսկերն ու առաջարկում պարզ լուծումներ։

Փաստաթուղթը պատրաստված է պետական գնումները համակարգող լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը համակարգի առցանց գործիքները բարեփոխելու գործընթացին պրակտիկ աջակցություն տրամադրելու նպատակով։ Քարտեզագրված խնդիրների մասին ամփոփ ուղեցույցը հնարավորություն կտա նաև խուսափելու նմանօրինակ բացթողումներից ֆինանսական ոլորտը սպասարկող/ներկայացնող նոր էլեկտրոնային համակարգերի մշակման և գործարկման համատեքստում։

Armeps.am

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Խնդրի նկարագրություն: Համակարգը հնարավորություն է տալիս միևնույն առարկան, ծառայությունը, աշխատանքը ներկայացնել կամայական ձևով, արդյունքում նշվում են տարբեր անվանումներ, իսկ անգամ նույնական անվանման դեպքում կարող են լինել գրության տարբեր ձևեր և/կամ տառասխալներ: Այս համատեքստում գրեթե անհնար է որևէ գնման առարկայի վերաբերյալ ամբողջական տեղեկությունների հավաքագրումը: Միաժամանակ չկան հնարավորություններ վերստուգելու հավաքագրված տվյալների ամբողջականությունը:

Օրինակ N 1



Օրինակ N 2



Օրինակ N 3



<u>Լուծման առաջարկ:</u> Առաջարկվում է գնման առարկայի դաշտում կիրառել անվանումների նույնականացման մեխանիզմ, երբ լրացնողը ոչ թե անձամբ է մուտքագրում անվանումը, այլ ընտրում է առաջդրված տարբերակներից։

<u>ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ</u>

<u>Խնդրի նկարագրություն:</u> Նույն մատակարարի անունը նշված է տարբեր ձևերով, ինչի արդյունքում անգամ մեկ տառի և նշանի բացակայության/տարբերության կամ սխալի դեպքում տվյալ մատակարարին առանչվող պայմանագրերը կարող են չգտնվել, կամ գտնվել մասնակի։ Արդյունքում հետազոտության պատկերը կլինի թերի։ Հարկ է նշել, որ մուտքագրողների կողմից սխալվելու կամ ոչ ամբողջական մուտքագրելը կարող է լինել ինչպես պատահականություն, այնպես էլ միտումնավոր քայլ։

Օրինակ N 3



<u>Լուծման առաջարկ:</u> Առաջարկվում է կազմակեպության անվանումը մուտքագրելու գործընթացը ուղղակիորեն կապել մատակակարարի ՀՎՀՀ-ին. այս դեպքում մուտքագրողը ոչ թե կգրի ընկերության անվանումը, այն կնշի ՀՎՀՀ-ն, իսկ համակարգն ավտոմատ կերպով կառաջարկի ընկերության ճշգրիտ անվանումը: Այս դեպքում մասնագետի սխալվելու հավանականությունը գրեթե վերանում է, կբացառվեն նաև անվանման կրկնաբանությունները:

<u>ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

<u>Խնդրի նկարագրություն:</u> Պայմանագրերի ամսաթվերի հատվածում առկա են բազմաթիվ վրիպակներ, որոնց հետևանքով փաստացի այդ պայմանագրերի որոնումը դառնում է բարդ, իսկ երբեմն անհնար:

Օրինակ N 4

Դատական դեպարտամենտ	08-0047-162-0	<<Վեոլա Ջուր>> ՓԲԸ	02655115	06/03/0201	ՄԱ	Խմելու ջրի բաշխում	345200	61319.3
ՀՀ Արմավիրի մարզպետարան	ՀՀ ԱՄ-ԳՀԱՊՁԲ-20/07	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	00861057	25/02/0202	ԳՀ	տոներ լազերային տպիչների/ հեռապատճենահանող մեքենաների համար	36000	36000
ՀՀ պաշտպանության նախարարություն	\ԳՀԱՊՁԲ-20-4/23-1	Արպանիվ ՍՊԸ	09209297	20/08/0202	ԳՀ	ավտոմեքենաների անիվներ	26604248	26604248
«Մարտունու Ծննդատուն» ՊՓԲԸ	ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-2018/1/2	Վագա ֆարմ ՍՊԸ	01536316	28/03/0208	ԳՀ	Դեղորայք	203160	202500
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/16/6	Արմեն Զաքարյան Գագիկի Ա/Ձ	20172914	25/06/0219	ԳՀ	Տնտեսական ապրանքներ	9500	9500
ՀՀ դատախազություն	ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-19/16	Էյչ Գրուպ ՍՊԸ	01254973	05/12/0219	ԳՀ	IP հեռախոս	3660000	3660000

<u>Լուծման առաջարկ:</u> Առաջարկվում է դնել սահմանափակող մեխանիզմ, որ համակարգը ավտոմատ կերպով չընդունի ապագայի կամ վաղ անցյալի ամսաթվով ներբեռնված պայմանագրերը: Մեխանիզմով կարելի է ապահովել, որ եթե անգամ մասնագետը սխալմամբ թվերը քիչ գրի կամ այլ թիվ գրի, համակարգը կհուշի, որ սխալմունք կա և կուղղի այն:

<u>Խնդրի նկարագրություն:</u> Պայմանագրի ծածկագրով փնտրելիս հաճախ նույն գնումը մի քանի տողով է ներկայացվում, ինչը անհասկանալի է և կրկին շփոթեցնող: Փաստացի նույն պայմանագիրը հրապարակվում է տարբեր տողերով, ինչը կարող է սխալ հաշվարկների և հետևությունների պատճառ դառնալ:

Օրինակ N 5

ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀԲՊԿ-ՊԸՇՁԲ-17/9	ՄԱՌՔ ՍՊԸ	01236957	29/05/2017	ԳՀ	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	66700	66700	0	Բեռնել (2)
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀԲՊԿ-ՊԸՇՁԲ-17/9	ՄԱՌՔ ՍՊԸ	01236957	29/05/2017	ՊԸ	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	334000	26100	445300	Բեռնել (1)
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀԲՊԿ-ՊԸՇՁԲ-17/9	ՄԱՌՔ ՍՊԸ	01236957	29/05/2017	ԳՀ	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	138900	138900	0	Բեռնել (2)
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀԲՊԿ-ՊԸՇՁԲ-17/9	ՄԱՌՔ ՍՊԸ	01236957	29/05/2017	ԳՀ	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	102300	102300	0	Բեռնել (1)

Պատահում են նաև դեպքեր, երբ գնման մասին տողը լինում է, սակայն պայմանագրերը կցված չեն լինում. նման դեպքեր պատահում են հատկապես նոր կատարված գնումների հրապարակման դեպքում:

Լինում են դեպքեր, երբ տարբեր մարմինների կողմից իրականացված գնումների ծածկագրերը գրեթե համընկնում են: Ներքևում ներկայացված օրինակի դեպքում Աբովյանի համայնքապետարանի և Քաղաքաշինության կոմիտեի ծածկագրերը գրեթե համընկնում են: Լինում են դեպքեր, երբ պետական մարմինը նշում է անվան հապավումը, հետո նոր ծածկագիրը, լինում է, որ անվան հապավումը ընդհանրապես չի նշվում: Չկա միասնական մոտեցում և կամայականությունները շատ են:

Օրինակ N 6

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը	Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով	Հաշվարկային տնտեսում	Պայմանագիր
Աբովյանի համայնքապետարան	ՊԸԾՁԲ-17/9	ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	01508665	25/04/2017	ՊԸ	Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակերի փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում	180000	180000	1466000	Բեռնել (1)
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/9	ՄԱՌՔ ՍՊԸ	01236957	29/05/2017	ԳՀ	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	66700	66700	0	Բեռնել (2)
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/9	ՄԱՌՔ ՍՊԸ	01236957	29/05/2017	ՊԸ	Երևանի Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	334000	26100	445300	Բեռնել (1)

<u>Լուծման առաջարկ:</u> Ցանկալի կլինի գնման նոր հայտ բացելիս, համակարգում պետական մարմինն ավտոմատ ընտրվի և ավտոմատ համակարգը ծածկագրի սկզբի մասը գեներացի և միայն դրանից հետո մուտքագրվի երկրորդ մասը: Առավել արդյունավետ կլինի, որ համակարգն ինքը նոր ծածկագիր առաջարկի, որը կտարբերվի մյուս պետական մարմինների ծածկագրերից:

Բացի այդ, ցանկալի կլինի, որ ծածկագրի վրա սեղմելիս հասանելի դառնան տվյալ գնման հետ կապված բոլոր փաստաթղթերը՝ հայտից մինչև վերջնական պայմանագիր:

Միևնույն ժամանակ հաճախ բուն պայմանագրերում նշված գումարը և armeps-ի տողում նշված գումարը չեն համապատասխանում միմյանց, ինչը կրկին շփոթեցնող է: Պատահում է նաև, որ բաժինները մեկը մյուսի փոխարեն է նշված լինում:

Օրինակ N 7

ՀՀ կադաստրի կոմիտե	ԿԿ-ԳՀԱՊՁԲ-19/02-5	«ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ	01566434	23/10/1901	ԳՀ	ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ	1699800	1699800	0	Բեռնել (2)
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	ԳՎԲԿ-ԳՀՇՁԲ-21/5-3	ՆԱԵՎ ՍՊԸ	05022204	22/01/1902	ԳՀ	տպագրություն և առաքում	211700	211700	0	Բեռնել (3)
«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»	ՊԾՄԱ-ԱՊՁԲ-2019/8	<<Հայմամուլ>> ՓԲԸ	00401345	17/09/1906	ՄԱ	Թերթեր	94200	92400	0	Բեռնել (1)
ՀՀ քննչական կոմիտե	Բ9258971619	ՎԻ Գրուպ ՍՊԸ	03538112	19/04/1907	ԳՀԾ	Թարգմանություն	9820	9820	0	Բեռնել (2)
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	N ՀՀ ԳՄ-ՄԱԾՁԲ-19/7	«ՎԱՌ» ԱԿ	08408251	12/03/1909	ՄԱ	հակավիրուսային համակարգչային ծրագրային ապահովման ծառայություններ	399000	399000	0	Բեռնել (3)
«Սևանի ԲԿ» ՓԲԸ	ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 18/6/8	Թեոֆարմա ՍՊԸ	02248584	29/12/1918	ԳՀ	դեղորայք	425000	425000	0	Բեռնել (3)
ՀՀ կադաստրի կոմիտե	ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/06-3	Վահագն Մելիք-Մարտիրոսյան ԱՁ	21304935	06/02/1920	ԳՀ	համակարգչային սարքավորում	368394	368394	0	Բեռնել (2)

Օրինակ N 8

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը	Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով	Հաշվարկային տնտեսում	Պայմանագիր
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	611	Արթիկի ԲԿ	06107489	23/08/2005	ՄԱ	Ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալություն	62500	62500	0	Բեռնել (2)
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Արթիկ611-2017	Արթիկի ԲԿ	06107489	23/08/2005	ԲԸԱՀ	որ բնակելի անշարժ գույքի վարձակալություն	250000	250000	0	Բեռնել (1)
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	611	Արթիկի ԲԿ	06107489	23/08/2005	ՄԱ	Անշարժ գույքի վարձակալություն	250000	250000	0	Բեռնել (1)
ՀՀ վիճակագրական կոմիտե	Հ-Վ 06-2017	Հայջրմուղկոյուղի ՓԲԸ	02509667	01/01/2006	ԲԸԱՀ	Խմելու ջրի բաշխում	11146	11146	0	Բեռնել (1)
ՀՀ ֆինանսների նախարարություն	Պայմանագիր	Յունիբանկ	02559077	02/02/2006	ՄԱ	Բանկային ծառայություններ	800000	600000	0	Բեռնել (2)
ՀՀ ֆինանսների նախարարություն	Պայմանագիր	Յունիբանկ	02559077	02/02/2006	ԲԸԱՀ	բանկային ծառայություններ	800000	800000	0	Բեռնել (2)
Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	Պայմանագիր Ջուր	<<ԱՐՄԵՆԻԱ>> ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	02562664	19/05/2006	ՄԱ	Խմելու ջրի բաշխման ծառայությունների ձեռքբերում	91400	91400	0	Բեռնել (1)
Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	Պայմանագիր Ջուր	<<ԱՐՄԵՆԻԱ>> ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	02562664	19/05/2006	ՄԱ	Խմելու ջրի բաշխման ծառայությունների ձեռքբերում	90100	90100	0	Բեռնել (1)

Օրինակ N 9

ՀՀ քաղաքաշինության կոմիտե	ՀՀ ՔՆ ԾՁԲ-061355-2018	ՄՏՍ Հայաստան	01551651	30/11/2007	ՄԱ	Բջջային հեռախոսների ծառայություններ	1300000	1323000	0	Բեռնել (5)
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	061355	ՄՏՍ Հայաստան ՓԲԸ	01551651	30/11/2007	ԲԸԱՀ	բջջային հեռախոսների ծառայություններ	2456000	1569000	100000	Բեռնել (3)
ՀՀ պետական պահպանության ծառայություն	482	«Երևան Ջուր» ՓԲԸ	01555351	01/01/2008	ԳՉԾ	գնում չհանդիսացող ծախս	808262.4	808262.4	0	Բեռնել (1)
ՀՀ սահմանադրական դատարան	4-12-9	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	02655115	07/01/2008	ՄԱ	խմելու ջրի բաշխում	1200000	700000	0	Բեռնել (2)
ՀՀ սահմանադրական դատարան	4-12-9	Երևան Ջուր ՓԲԸ	01555351	07/01/2008	ԲԸԱՀ	խմելու ջրի բաշխում	1400000	1400000	0	Բեռնել (2)
ՀՀ ոստիկանություն	830545-6180-2017	<Հայաստանի Էլեկտրական ցանցեր> ՓԲԸ	01520882	07/01/2008	ԲԸԱՀ	էլեկտրաէներգիայի մատակարարում	46800.600000000006	147211.68000000002	0	Բեռնել (1)

Օրինակ N 10

Դատական դեպարտամենտ	000064/19	<Հայաստանի Էլեկտրական ցանցեր> ՓԲԸ	01520882	25/08/2013	ՄԱ	Էլեկտրականության բաշխում	1000000	1000000	0	Բեռնել (1)
Դատական դեպարտամենտ	300011, 200039, 19602750093, 0015, 0974, 1191, 0306, 2498, 6700311011967, 206009, 000009, 680117001022, 170-170, 180000000004, 882535, 3266, 882536, 265078, 333141, 264085, 111412, 013855, 000392, 000050, 000110, 882816, 004268, 004268, 000064, 000132, 000729, 000078, 111679, 210157, 250002250004, 230304, 882537, 111413, 005236, 570..000151, 560..000166, 601..000440, 610..000371, 230273, 400157, 336, 710000000037, 510000000032, 545000006091, 550000005066, 009400	Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ	01520882	18/01/2017	ԲԸԱՀ	էլեկտրականության բաշխում	152419900	151361900	-800000	Բեռնել (75)

Օրինակ N 11

7	ԲԸԱՀ	էլեկտրականության բաշխում	152419900	151361900	-800000	Բեռնել (75) / Բեռնել (0)
8	ՄԱ	էլեկտրականության բաշխում	7836300	7879600	43300	
3	ՄԱ	էլեկտրականության բաշխում	1467000	1187000	0	
9	ՄԱ	էլեկտրականության բաշխում	734880	654080	0	

[2017-01-18] 300011.pdf
[2017-01-18] 200039.pdf
[2017-01-18] 19602750093.pdf
[2017-01-18] 0015.pdf
[2017-01-18] 0306.pdf
[2017-01-18] 0974.pdf
[2017-01-18] 1191.pdf
[2017-01-18] 2498.pdf
[2017-01-18] 170-170.pdf
[2017-01-18] 180000004.pdf
[2017-01-18] 336.pdf
[2017-01-18] 51000.pdf
[2017-01-18] 545000.pdf
[2017-01-18] 550000.pdf
[2017-01-18] 710000.pdf
[2017-01-18] 000009.pdf
[2017-01-18] 206009.pdf
[2017-01-18] 680117001022.pdf
[2017-01-18] 6700311011967.pdf
[2017-01-18] 000064.pdf
[2017-01-18] 000078.pdf

Խնդրի նկարագրություն: Armeps.am-ի «Գնումների պլաններ» բաժնում ներկայացված տեղեկություններով ևս հնարավոր չէ ամբողջական ու ստույգ ուսումնասիրություն իրականացնել. տվյալներն լրացված են ոչ ամբողջական, շատ են կամայական մուտքագրումները:

Օրինակ N 12

Աբովյանի համայնքապետարան	09132200/503	բենզին, ռեգուլյար	- Տրանսպորտային նյութեր	ԷԱՃ	լիտր	0.00	0	0.00	10/03/2022
Աբովյանի համայնքապետարան	09132200/502	բենզին, ռեգուլյար	- Տրանսպորտային նյութեր	ԷԱՃ	լիտր	0.00	0	0.00	25/02/2022

Աբովյանի համայնքապետարան	03222118/501	կիտրոն	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	ԷԱՃ	կիլոգրամ	0.00	0	0.00	01/03/2022

Օրինակ N 13

ՀՀ վարչապետի աշխատակազմ	39263400/501	ամրակ, միջին	- Գրասենյակային նյութեր և հագուստ	ԷԱՃ	տուփ	0.00	150	22,500.00	09/02/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	39263400/1	ամրակ, միջին	- Գրասենյակային նյութեր և հագուստ	ԷԱՃ	տուփ	120.00	1000	120,000.00	04/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	39263400/2	ամրակ, միջին	- Գրասենյակային նյութեր և հագուստ	ԷԱՃ	տուփ	150.00	80	12,000.00	03/02/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	39263410/501	ամրակ, փոքր	- Գրասենյակային նյութեր և հագուստ	ԷԱՃ	տուփ	0.00	10	900.00	20/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	39263410/1	ամրակ, փոքր	- Գրասենյակային նյութեր և հագուստ	ԷԱՃ	տուփ	100.00	5	500.00	20/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	77111300/1	այլ սարքավորումների վարձակալություն	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	ՄԱ	դրամ	0.00	1	180,000.00	04/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	33121242/504	անալիզատոր	- Հատուկ նպատակային այլ նյութեր	ԷԱՃ	հատ	0.00	18	170,640.00	12/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	33121242/503	անալիզատոր	- Հատուկ նպատակային այլ նյութեր	ԷԱՃ	հատ	0.00	12	137,280.00	12/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	33121242/502	անալիզատոր	- Հատուկ նպատակային այլ նյութեր	ԷԱՃ	հատ	0.00	100	54,800.00	12/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	33121242/501	անալիզատոր	- Հատուկ նպատակային այլ նյութեր	ԷԱՃ	հատ	0.00	100	54,800.00	12/01/2022

Երբեմն «Գնման առարկա» բաժնում միևնույն առարկան ներկայացված է տարբեր անվանումներով:

Օրինակ N 14



Բացի այդ, գնումների պլաններում միևնույն առարկան ներկայացված է մի քանի տողով, ինչը ևս անհասկանալի է: Շատ դեպքերում միավորի գինը, ընդհանուր գինը կամ քանակը նշված է 0, ինչը սխալ է, քանի որ այն պետք է պարտադիր լրացված լինի:

ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/507	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	0.00	50	11,250.00	12/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/506	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	0.00	50	175,000.00	11/02/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/1	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	200.00	200	40,000.00	04/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/505	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	0.00	0	0.00	07/12/2021
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/2	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	800.00	500	400,000.00	04/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/3	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	700.00	1910	1,337,000.00	04/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/1	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	248.00	50	12,400.00	04/01/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197230/5	թղթապանակ	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	680.00	100	68,000.00	03/02/2022
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197235/501	թղթապանակ՝ ամրակով	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	0.00	0	0.00	07/12/2021
ՀՀ վարչապետի աշխատակազմ	30197235/1	թղթապանակ՝ ամրակով	- Գրասենյակային նյութեր և հագուստ	էԱՃ	հատ	620.00	100	62,000.00	04/01/2022

Օրինակ N 15

<u>Լուծման առաջարկ:</u> Անհրաժեշտ է գնման առարկան ևս ավտոմատացնել, այսինքն՝ մասնագետը համակարգում ոչ թե ձեռքով ավելացնի գնման առարկան, այլ փնտրի և ընտրի, որպեսզի միևնույն առարկան, ծառայությունը կամ աշխատանքը մի քանի անվանումով չլինի:

Առաջարկվում է նաև այնպես անել, որ համակարգը չընդունի առարկաները, եթե քանակը, միավորի գինը կամ ընդհանուր գումարը նշված է 0:

Ցանկալի է, որպեսզի կրկնակի ստուգման հնարավորություն ստեղծելու համար, գնման պլանները ամողջությամբ մեկ ֆայլով տեղադրված լինեն այնպես, ինչպես տեղեդրված են gnumner.am-ում:

<u>Առաջարկ:</u> Կարևոր է նաև, որ համայնքապետարաններից կողմից իրականացված բոլոր գնումները ևս պարտադիր կերպով հրապարակվեն armeps.am-ում, ինչն այսօր դեռևս արվում է մասնակիորեն:

Gnumner.am

Ընդհանուր առմամբ gnumner.am կայքը շատ ծանր է աշխատում, յուրաքանչյուր էջ բացելը որպես կանոն տևական ժամանակ է խլում:

Դժվար է կայքում որևէ գնում գտնելը. որոնողական համակարգը շատ վատ է աշխատում, չկա ֆիլտրման համակարգ: Համակարգն ամբողջությամբ թարմացման կարիք ունի:

Ցանկալի կլիներ, որ համակարգը թույլ տար յուրաքանչյուր պետական մարմնի դեպքում, ինչպես armeps.am-ում է, ֆիլտրերի միջոցով տեսնել, թե ինչ մրցույթ է հայտարարել, ինչ փուլում է գտնվում մրցույթը, ովքեր են մասնակցել մրցույթներին, ով է հաղթել և այլն:

Հարկ է նաև նշել, որ որևէ գնում փնտրելի անհրաժեշտ է օգտագործել պայմանագրի ծածկագիրը, սակայն այս դեպքում գնումները փնտրելիս որպես կանոն հնարավոր չի լինում գտնել դրա հետ փոխկապակցված փաստաթղթերը:

Օրինակ N 16

Պատվիրատու	Պայմանագրի ծածկագիրը	Ընտրված մասնակից	ՀՎՀՀ կոդ կամ համարժեք	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթացակարգ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը	Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով	Հաշվարկային տնտեսում	Պայմանագիր	Հանձնման/ընդունման արձանագրություններ	Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ
ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՎԱՌ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/07-2	ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ	00918262	18/01/2022	ԷԱՃ	առողջապահական և լաբորատոր նյութեր	179037	179037	0	Բեռնել (2)	Բեռնել (0)	Բեռնել (0)
ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-22/6-1	ՌԵԱՔԻՄ ՍՊԸ	01239302	05/01/2022	ԷԱՃ	կենցաղային ապրանքներ	100800	100800	0	Բեռնել (2)	Բեռնել (0)	Բեռնել (0)

Օրինակ N 17



Գնումներում է ներկայացվում նաև շահերի բախման բացակայությունների և իրական շահառուների տվյալները, որը ևս որոնողական համակարգերի միջոցով հնարավոր չէ գտնել:



Լուծման առաջարկ: Առաջարկվում ենք, փոխել փնտրման մեխանիզմն այնպես, որ ֆիլտրերի միջոցով հնարավոր լինի գտնել ընկերության կողմից ներկայացված շահերի բախման կամ իրական շահառուների մասին ներկայացված փաստաթղթերը: Այսինքն՝ ընկերության անվանումը կամ պակմանագրի ծածկագիրը ընտրելու դեպքում ավտոմատ ներկայացվի գնման մրցույթի շրջանակում ներկայացած իրական շահառուների կամ շահերի բախման մասով փաստաթղթերը:

Առաջարկվում է գնումներ կայքում փաստաթղթերը դասակարգել ըստ մի քանի չափորոշիչերի, օրինակ՝ ըստ պետական մարմինների, իրականացված գնումների մրցույթների, ժամանակաշրջանի և այլն:

Նաև անհրաժեշտ է զետեղել տեղեկատվություն, թե որ ընկերություններն են որակավորված մասնակցելու փակ մրցույթներին կամ որոշակի լիցենզիա ունեն կոնկրետ ոլորտում արտադրություն կամ ծառայություն մատուցելու համար: